ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Գործուղման արդյունքների մասին

1.**Անունը, ազգանունը**
Արմեն Ղազարյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
Իսպանիայի Թագավորություն, Մադրիդ, 2019թ. նոյեմբերի 17-20

4. **Հրավիրող կողմը**
ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության (ՄԱԱԵ) շրջանակներում

5. **Գործուղման նպատակը**
Մասնակցել ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության (ՄԱԱԵ) մեկնարկի հեռանկարների քննարկմանն ուղղված հանդիպմանը

6. **Քննարկված թեմաները**
ՏԿԵՆ միգրացիոն ծառայության պետ Արմեն Ղազարյանի գլխավորությամբ ՀՀ միջգերատեսչական պատվիրակության կազմում ընդգրկված էին նաև ՀՀ Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի պետ, ոստիկանության գնդապետ Արա Ֆիդանյանը, Արտաքին գործերի նախարարության Եվրոպայի վարչության պետ Տիգրան Սամվելյանը և հյուպատոսական վարչության պետի պաշտոնակատար Արտակ Ավետիսյանը:

Իսպանական պատվիրակության կազմում էին Իսպանիայի Թագավորության արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության պետ Խուան Դուարտե Կուադրադոն, օտարերկրացիների հարցերով գլխավոր վարչության տնօրենի տեղակալ Ռոսարիո Բեռնալ Գարսիան, վերջինիս խորհրդական Սերխիո Կրսնիկը, միգրացիոն հարցերի գրասենյակի փոխտնօրեն Մանուել էրնանդես Գամայոն, ներքին գործերի նախարարության միջազգային հարաբերությունների, ներգաղթի և օտարերկրացիների հարցերով գլխավոր վարչության փոխտնօրեն Մանուել Ալամա Օրենեսը և այլ բարձրաստիճան պաշտոնատար անձինք:

Բովանդակային քննարկումներ ծավալվեցին ՄԱԱԵ մեկնարկի շուրջ՝ դրա տարբեր բաղադրիչների մանրամասն ներկայացմամբ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հայաստանի միգրացիոն ծառայության պետ Արմեն Ղազարյանն ընդգծեց ՄԱԱԵ մեկնարկի համար նախապայման հանդիսացող ՀՀ-ԵՄ Մուտքի արտոնագրերի դյուրացման և Հետընդունման մասին համաձայնագրերի՝ ՀՀ կողմից արդյունավետ կիրարկման փաստը: Նա ներկայացրեց նաև ընդհանուր միտումները հարկադիր վերադարձի ոլորտում, թվերի դինամիկան վերջին տարիների կտրվածքով:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հանդիպման ժամանակ անդրադարձ է կատարվել առողջապահական նպատակներով ապաստանի համակարգի հնարավոր չարաշահման հարցերին, որոնք նկատելի են հատկապես եվրոպական երկրներում, որին ի պատասխան հայկական կողմը ներկայացրել է առողջապահության ոլորտում երկրում իրականացվող խորքային բարեփոխումները:

Իսպանացի գործընկերներն աջակցություն հայտնեցին ապաստանի ոլորտի բարեփոխումների ուղղությամբ հայկական կողմից գործադրվող ջանքերին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկներ՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Հանդիպման երկու կողմերն էլ բարձր գնահատեցին սույն հանդիպման ձևաչափը և դրա արդյունավետությունը՝ հաշվի առնելով ներկայացված հարցերի կարևորությունը: Բարձր գնահատվեց ՀՀ-ԵՄ մուտքի արտոնագրերի ազատականացման շուրջ երկխոսության (ՄԱԱԵ) շարունակականությունը:

10.Ստորագրությունը, ամսաթիվը

/Ա. Ղազարյան / *22.11.2019թ.*